

# ՊԵՆՏԱՆԻՍՏԱՆԻ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

## ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ (շարունակություն)

Կարգապահություն ներդնելիս լավագույն արդյունքներ տալիս են ոչ թե ճնշման, այլ արտահայտչական միջոցները: Երբ փորձում են կարգապահություն ապահովել միայն ճնշումների օգնությամբ, ապա զինվորները դառնում են ծուլ և այլևս ինչպես հարկն է չեն հակազդում կալանքին կամ պատժի մյուս ձևերին: Նրանք կորցնում են իրենց նախաձեռնողությունն ու անկեղծությունը: Երբ հիմնականում ճնշումներ են գործադրվում, ապա անհրաժեշտ է դառնում մշտական հսկողություն սահմանել զինվորների վրա: Զինվորներին կառավարելու փոխարեն ստիպված են լինում բռնանալ նրանց կամքի վրա: Այսպիսի համակարգն արդարացված չէ նաև տնտեսական տեսակետից, քանի որ նրան հենարան է պետք՝ ի դեմս լայն ու մեծ ծախսեր պահանջող կազմակերպության, որի գոյությունը, բացի դրանից, ոչ մի կերպ չի նպաստում բանակի մարտական ոգու և մարտունակության բարձրացմանը: Այդ կազմակերպության մեջ են մտնում զինվորականների համար նախատեսված բանտերն ու հաուստվախտերը, բանտերի ծառայողական անձնակազմը, ռազմական ոստիկանությունը, բժշկական աշխատողների լրացուցիչ հաստիքները, գնդում լրացուցիչ պահակակետերը, լրացուցիչ զենքը և այլն:

Մարտական հզոր ուժ դառնալու համար բանակը պետք է վերին աստիճանի կարգապահ լինի: Իսկ զորամասի կարգապահությունը ձևավորվում է

առանձին զինվորների կարգապահությունից: Զինվորների կարգապահությունը ձեռք է բերվում ոչ թե նրանով, որ սխալ գործողությունների համար նրանց պատժում են, այլ նրանց վրա այնպիսի ազդեցություն գործելով, որպեսզի նրանք ճիշտ գործելու ցանկություն ունենան: Եթե զինվորին կրկին ու կրկին այնպիսի հրամաններ են տալիս, որոնք նա ի վիճակի չէ կատարել, ապա շուտով նա սկսում է չկատարել նաև ավելի հեշտ հանձնարարությունները: Սկզբում զինվորին անհրաժեշտ է ամենայն մանրամասնությամբ սովորեցնել, թե ինչ պետք է անի, և հետո միայն հրամաններ տալ: Պետք է ի նկատի ունենալ նաև այն, որ կան ոչ միան արագ, այլև ավելի դանդաղ սովորող զինվորներ, որոնց կրկին ու կրկին պետք է բացատրել, թե ինչ են կատարելու: Յուրաքանչյուր նոր հնար իր բոլոր բաղադրիչների հետ միասին անհրաժեշտ է սովորեցնել ամենայն մանրամասնությամբ: Ամենայն մանրամասնությամբ անհրաժեշտ է ուսումնասիրել այն բոլոր տարրերը, որոնցից կազմված է կարգապահությունը: Եթե գնդացիի հավաքելը հանձնարարված է որևէ նորակոչիկի, ապա չի կարելի նրան ծիծաղելի վիճակի մեջ դնել և թերարժեքություն ներշնչել միայն այն պատճառով, որ նա ուշ է հասկանում, թե ինչ պետք է անի: Յուրաքանչյուր հրահանգիչ անպայման պետք է համբերատար լինի: Մարդիկ ուսումնական գործունեության մեջ արագ են առաջադիմում, երբ սովորում են առանց ավելորդ շտապողականության:

Հրամանը չհասկանալը այն չկատարելու համար արդարացում չի կարող լինել: Միևնույն ժամանակ անիմաստ բան է սպասելը, որ երիտասարդ զինվորն ինքը ամեն ինչից ինքնուրույնաբար գլուխ կհանի, իսկ եթե դա նրան չի հաջողվում, ապա պատժել, որպեսզի ապագայի համար դաս լինի: Հրամանների ճիշտ կատարումն ապահովելու լավագույն եղանակն այն է, որ զինվորի մոտ պետք է սովորություն ձևավորել՝ հասկանալ այն, ինչ պարտավոր է կատարել: Քանի դեռ զինվորը վարքի մաքուր քարտ ունի, ապա նա լեռներ կշարժի տեղից՝ այն մաքուր պահելու համար: Բայց հենց որ այնտեղ արվում է առաջին իսկ գրությունը, թեկուզ և որևէ աննշան հարցի վերաբերյալ, ապա նրա այդ դրդապատճառը անհետանում է: Ահա թե ինչու ոչ մի սպա չպետք է իր վրա նման լուրջ խթանն արհամարհելու պատասխանատվություն վերցնի:

Առաջին կարգի կապիտան Ռորի Օ'Կոննորը իր «Նավի կառավարման տասը պատվիրանները» հիանալի գրքում գրում է. «Մեր ծառայության արժանապատվությունն ու վեհությունը պահանջում են, որպեսզի յուրաքանչյուր սպայի և ծովայինի վստահեն, իսկ եթե նրանք ինչ-որ կանոններ են խախտում, ապա դրանում տեսնել ոչ թե շար մտադրություն, այլ անտեղյակություն կամ մոռացկոտություն: Իսկ եթե սպան կամ ծովայինը կրկին անգամ են սխալ թույլ տալիս, ապա նրանց համար պատասխանատվություն կրող մարդիկ կա-

րող են գործել շատ հանգիստ՝ նկատի ունենալով, որ իրենց կողքին են ողջ նավատորմը, կարգապահական կանոնադրությունն ու երկրի խորհրդարանը»:

Այս ազնիվ խոսքերն իր սրտում պետք է կրի յուրաքանչյուր սպա, ով պարտավոր է հսկել զինվորական օրենքների կատարման վրա:

Մենք բոլորովին էլ նկատի չունենք, թե կարգապահությունը բացառում է պատիժներ կիրառելը: Եվ իսկապես, եթե հրամանատարը ենթադրում է, որ իր զորամասը կարող է դուրս գալ իր հսկողությունից, ապա նա պարտավոր է անմիջապես դիմել կտրուկ միջոցների: Վտանգավոր չէ, երբ նա ժամանակավորապես դաժան մարդու համբավ է ձեռք բերում: Ապացուցելով, որ ինքն իր գործն իմացող սպա է, նա կարող է մի փոքր թուլացնել սանձերը: Անհրաժեշտության դեպքում նա կարող է կրկին ձգել դրանք, բայց դա հազիվ թե պետք լինի անել:

Հիշեցեք, որ ձեռքից բաց թողնված սանձերը ձգելն արդեն անհնարին է: Այդ պատճառով էլ կարգապահական ոչ մի խախտում չի կարելի թողնել առանց կասեցման, և ոչ մի լուրջ զանցանք չի կարելի լուրջան մատնել: Ինքնազխտության ամեն մի դրսևորում անմիջապես պետք է կասեցնել, այլապես զորամասը դուրս կգա հսկողությունից:

Կարգապահության լուրջ խախտումներ թույլ չտալու համար անհրաժեշտ է հետևել և ժամանակին ու վճռականորեն վերացնել փոքրիկ թերությունները:

Կարգապահական պրակտիկայի այս կարևորագույն դասը պետք է անգիր իմանալ: Սպաներից շատերը հակված են արհամարհելու մանրուքները՝ անկեղծորեն հուսալով, որ զինվորները կհասկանան ու կգնահատեն իրենց բարեկամական վերաբերմունքը և ավելի լուրջ հարցերում խախտումներ թույլ չեն տա: Բայց դա չափազանց վտանգավոր մոլորություն է: Եթե զորամասում շատ են կարգապահության լուրջ խախտումները, ապա վստահորեն կարելի է ասել, որ ժամանակին չեն կասեցվել այնպիսի մանր խախտումներ, ինչպիսիք են համազգեստը կրելու հարցում անփութությունը, ճշտապահության բացակայությունը և այլն:

Կարգապահական պրակտիկայի ոսկե կանոնն է. հո՛գ տարե՛ք մանրումների մասին, և այդ դեպքում ավելի մեծ խնդիրներում բարդություններ չե՛ք ունենա:

Ինչ վերաբերում է պատիժներին, ապա պետք է հիշել, որ դուք գործ ունեք հասուն մարդկանց հետ: Պատիժն այն ամենալուրջ գործողությունն է, որ մի մարդը կարող է կատարել մյուսի նկատմամբ: Պատիժ կիրառելը մեծագույն ուշադրություն և զգուշություն է պահանջում:

XVIII դարի մեծագույն բարեփոխիչ Բեկկարիան, որը ժամանակակից բոլոր քրեական օրենսգրքերի հիմնադիրն է, դեկավարվում էր ստորև բերվող կանոններով, որոնք մեր օրերում ճիշտ են այնպես, ինչպես ճիշտ էին այն ժամանակ, երբ նոր միայն առաջ էին քաշվում:

1. Ավելի լավ է հանցագործությունը կանխել վստահության միջոցով, քան թե այն կասեցնել դաժան պատժի օգնությամբ:

2. Այն երկրները, որտեղ օրինականացված են ամենախիստ պատիժները, հայտնի են նաև ամենից ավելի արյունոտ, ամենաանմարդկային հանցագործություններով, քանի որ և՛ հանցագործի, և՛ օրենսդրի ձեռքը շարժման մեջ է դնում նույն զգացումը՝ դաժանությունը:

3. Հանցագործությանն անմիջականորեն հետևող պատիժը միշտ ավելի արդյունավետ է:

4. Հաճախ հենց օրենքն է հանցագործություն ծնում:

5. Հանցագործությունները կանխելու ամենահուսալի մեթոդներից մեկը բարի գործերը խրախուսելն է:

Անհրաժեշտ է ընդգծել, որ պատիժը չի կարելի պարզ ձևականության վերածել: Ամեն մի խախտում պետք է ուսումնասիրվի ըստ էության և ողջ գործամասի շահերի տեսանկյունից: Միշտ պետք է նկատի ունենալ հետևյալ հարցը. ինչպե՞ս հասնել գործամասի առավել բարձր բարոյական վիճակի: Երբեմն, իսկապես, դրան կարելի է հասնել ինչպես հարկն է պատժելու միջոցով, բայց ավելի հաճախ՝ անսահման մեծահոգություն դրսևորելով:

Լայնորեն հայտնի է այն դեպքը, երբ Նապոլեոնը պահակակետերը ստուգելիս պարզում է, որ ժամապահներից մեկն իր դիրքում, անտառի բացատում, հենց ձյան վրա պառկել ու քնել է: Ըստ կանոնագրքի Նապոլեոնը պետք է իր մոտ կանչեր պահակախմբի պետին, ձերբակալել տար կարգազանցին, այնուհետև դատի տար և շարքի առաջ գնդակահարեր: Նման հանցագործությունը ներել չի կարելի, որտեղ էլ այն կատարված լինի՝ իր երկրում, թե հակառակորդի տարածքի վրա: Չի կարելի խղճալ այն զինվորին, որն ամոթալի արարք է գործել՝ քնել է իր պոստի վրա, վտանգելով մարտական ընկերների կյանքը: Ամենաերիտասարդ կապրալի համար նույնիսկ պարզ է, թե ինչպես էր պարտավոր վարվել Նապոլեոնը:

Բայց Նապոլեոնը հանճար էր, իսկ հանճարեղ մարդը գործում է այնպես, որ սովորական մարդը կռահել անգամ չի կարող: Նա վերցնում է քնած ժամապահի հրացանը, կախում է ուսից՝ զբաղեցնելով հոգնած զինվորի կողմից լքված դիրքը: Հերթափոխի հետ մոտենալով սերժանտը տեսնում է, որ ժամապահը դեռ քնած է, իսկ կայսրը կանգնած է նրա դիրքում:

Ո՛վ կարող է համարձակություն ունենալ և պնդել, թե Նապոլեոնը սխալ է թույլ տվել, թե նա զիջում է կատարել իր պարտքը զանց առնողին: Այդ խորաթափանց հոգեբանն, անկասկած, իրավացի էր: Գեներալ սըր Ջորջ Մակմանն այս միջադեպի կապակցությամբ նկատել է. «Նրանից ավելի լավ ոչ ոք չգիտեր, թե որքան է հոգնում այն զինվորը, որն ամբողջ օրը արշավանքի է մասնակցել: Նրանից ավելի լավ ոչ մեկը չէր հասկանում, որ «փոքրիկ կապրալի» մասին պատմությունը, որը հրացանն իր ուսին է առել՝ կարգազանցին գնդակահարող զորամաս կանչելու փոխարեն, հաջորդ օրն իսկ կայծակի արագությամբ տարածվելու է ամբողջ ճամբարում և արշավանքի դուրս ելած զորասյուններում: Այդ դեպքից հետո սկսեցին փառաբանել ոչ միայն կայսեր մեծ հմայքը, այլև նրա, որպես քարոզչի, նուրբ զգայնությունը»:

Եվ իսկապես, ինչու՞ հենց այդպես չվարվել: Հրամանատարներից յուրաքանչյուրի անձնական իրավունքն է բոլոր հնարավոր միջոցներով հասնել իր զորքի մարտունակության և արդյունավետության բարձրագույն աստիճանին: Տվյալ դեպքում Նապոլեոնը մեծ իմաստնություն դրսևորեց, գտնելով, որ նպատակին հասնելու լավագույն ուղին պատերազմական ժամանակների օրենքի տառին հետևելը չէ, այլ այն շրջանցելը և այն մարդուն կենդանի թողնելը, ով արժանի էր գնդակահարության:

Նույնիսկ երևակայությունից զուրկ մարդու համար դժվար չէ պատկերացնելը, թե այս միջադեպն ինչպիսի բարոյական ազդեցություն գործեց Նապոլեոնի բանակների վրա: Եթե նրանց հրաման տրվեր կռվի մեջ մտնել, ապա նրանք այնպիսի ինքնամոռացությամբ, այնպիսի կրքով կկռվեին, որ դա զարմանք կպատճառեր նույնիսկ իրենց գլխավոր հրամանատարին: Մի՞թե զինվորը կտատանվեր իր կյանքը տալ այդպիսի հրամանատարի հետ կռիվ գնալիս: Դուք կասե՞ք՝ դա հիմարություն է: Հիմարություն է, թե ոչ, բայց դա է իրականությունը: Շատ դեպքերում հենց մեծահոգությունն է հաջողության հանգեցնում: Եվ խելացի ղեկավարը պետք է հմտորեն օգտվի դրանից:

Նորակոչիկների հետ անհրաժեշտ է բարեկամաբար զրուցել կարգապահական հարցերի մասին, ընդ որում, իրենց այն իրավունքների և պարտականությունների լույսի ներքո, որոնք նախատեսված են կանոնադրքով: Անհրաժեշտ է մանրամասնորեն բացատրել, թե որն է պատիժներ սահմանելու նպատակը: Այդ նպատակը զանցանքները կանխելն է, այլ ոչ թե վրեժ լուծելը: Գործելով զինվորական օրենսդրության համաձայն, սպան պետք է հարց տա ինքն իրեն, թե արդյո՞ք տվյալ դեպքում պետք է պատժել, իսկ եթե անհրաժեշտ է, ապա ո՞րն է նվազագույն պատիժը:

Հատկապես լուրջ նախազգուշացում պետք է կատարել զանգվածային պատիժների կապակցությամբ: Օրինակ, երբ ամենշաբաթյա ստուգումների

ժամանակ զորանոցի որևէ բաժնում անկարգություններ են հայտնաբերվում, ապա չի կարելի դրանց պատճառների անաշու հետաքննություն կատարելու փոխարեն հախուռն կերպով պատժել անխտիր բոլոր զինվորներին՝ նրանց արտահերթ աշխատանքի ուղարկելով կամ որևէ այլ ձևով: Դա կարող է շատ վնասակար հետևանքներ ունենալ: Մարդկային խմբի հոգեբանությունը էականորեն տարբերվում է խումբը կազմող անհատներից յուրաքանչյուրի հոգեբանությունից: Երբ խումբն ամբողջությամբ համոզված է, որ անհիմն կերպով պատիժ է կրում, ապա բավականին վտանգավոր հոգեբանական հետևանքներ են ծագում: Զանգվածային պատիժը հաճախ լուրջ հանցագործությունների է հանգեցնում, քանի որ այն, համախմբելով զինվորներին, խմբային բողոք է հարուցում:

Ե՛վ առաջին հերթին, և՛ երկրորդ հերթին և, մի խոսքով՝ միշտ, պետք է մտածել զինվորների բարոյական վիճակի մասին, որն ամենից առաջ ամրապնդվում է արդարության, վստահության և հարգանքի մթնոլորտում: